ՔԱՂՎԱԾՔ

«Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան»
պետական ոչ առևտրային կազմակերպության գիտական խորհրդի՝
2022 թվականի փետրվարի 8-ի, ժամը 14:00-ի նիստի
N 8 արձանագրությունից

ԼՍԵՑԻՆ.- **Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի տնտեսության կարգավորման և միջազգային տնտեսական հարաբերությունների ֆակուլտետի դեկանի թափուր պաշտոնի համար հայտարարված մրցույթին մասնակցելու նպատակով** («Հայաստանի Հանրապետություն» օրաթերթ, 21.12.2021, N 221 (7662)) համալսարանի տնտեսության կարգավորման և միջազգային տնտեսական հարաբերությունների ֆակուլտետի դեկան, տնտեսագիտության թեկնածու, դոցենտ **Գրիգոր Արշամի Նազարյանի** ռեկտորին ուղղված դիմումի մասին հարցը:

Զեկուցող՝ գիտական խորհրդին կից մրցութային հանձնաժողովի նախագահ, հասարակագիտության ամբիոնի պրոֆեսոր, փիլիսոփայական գիտությունների դոկտոր, «ՀՊՏՀ ամբիոնի պատվավոր վարիչ» **Ա.Հ.Սարգսյան**:

Զեկուցողը նշեց. «Հայաստանի Հանրապետություն» օրաթերթի 2021 թվականի դեկտեմբերի 21-ի 221 (7662) համարում հայտարարվել է մրցույթ **Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի տնտեսության կարգավորման և միջազգային տնեսական հարաբերությունների ֆակուլտետի դեկանի** թափուր պաշտոնի համար, որին կարող են մասնակցել տնտեսագիտության դոկտորի կամ թեկնածուի գիտական աստիճան, պրոֆեսորի կամ դոցենտի գիտական կոչում ունեցող անձինք: Տնտեսության կարգավորման և միջազգային տնտեսական հարաբերությունների ֆակուլտետի դեկանի թափուր պաշտոնի համար հայտարարված մրցույթին մասնակցելու նպատակով 2022 թվականի հունվարի 18-ին ռեկտորին դիմում է ներկայացրել տնտեսության կարգավորման և միջազգային տնտեսական հարաբերությունների ֆակուլտետի դեկան, տնտեսագիտության թեկնածու, դոցենտ **Գրիգոր Արշամի Նազարյանը**: Դեկանի թափուր պաշտոնի հավակնորդը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ, «Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպության կանոնադրությամբ և «Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի դեկանի ընտրության ընթացակարգով» սահմանված պահանջներին համապատասխան ներկայացրել է անհրաժեշտ փաստաթղթերը:

Գ.Ա.Նազարյանը ծնվել է 1964 թվականի օգոստոսի 22-ին Սյունիքի մարզի Գորայք գյուղում: 1971-1979 թթ. սովորել է Սյունիքի մարզի Գորայքի միջնակարգ դպրոցում: 1979-1981 թթ. սովորել և ոսկե մեդալով ավարտել է Արմավիրի մարզի Գրիբոյեդովի անվան միջնակարգ դպրոցը: 1982 ընդունվել է Երևանի ժողովրդական տնտեսության ինստիտուտի (ԵրԺՏԻ, ներկայում՝ Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան (ՀՊՏՀ)) պլանատնտեսագիտական ֆակուլտետ՝ «Արդյունաբերության պլանավորում» մասնագիտությամբ: 1983-1985 թթ. ծառայել է խորհրդային բանակում: Ծառայությունից հետո ուսումը շարունակել է նույն ֆակուլտետում նույն մասնագիտությամբ, որն ավարտել է 1987 թվականին գերազանցության դիպլոմով:

Գ.Ա.Նազարյանը 2003 թվականին պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն՝ ստանալով տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճան: 2007 թվականին նրան շնորհվել է դոցենտի գիտական կոչում: Հրատարակել է 8 ուսումնական ձեռնարկ, 6 մենագրություն և 46 գիտական հոդված:

Գ.Ա.Նազարյանի աշխատանքային գործունեությունը. 01.10.1988-18.10.1989 թթ.՝ ԵրԺՏԻ (ներկայում՝ ՀՊՏՀ) քաղաքատնտեսության ամբիոնում՝ ստաժոր-հետազոտող, 18.10.1989-15.07.1992 թթ.՝ ուսումնական կաբինետի լաբորանտ, 15.07.1992-25.03.1996 թթ.՝ ասիստենտ: 1996-2004 թթ. զբաղեցրել է տարբեր պաշտոններ «Հայկական ավիաուղիներ» ՓԲԸ-ում, իսկ 2004-2006 թթ.՝ ՀՀ կառավարությանն առընթեր քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչությունում (ՔԳԱՎ): 25.03.1996-30.06.1996 և 01.09.2000-30.06.2002 թթ.՝ համատեղությամբ դասավանդել է համալսարանում: 26.02.2004-02.03.2007 թթ.՝ Երևանի պետական տնտեսագիտական ինստիտուտի (ԵՊՏԻ, ներկայում՝ ՀՊՏՀ)) միջազգային տնտեսական հարաբերությունների ամբիոնում՝ ասիստենտ, 20.09.2007-20.05.2010՝ դցենտ, 20.05.2010 թվականից մինչ օրս՝ համատեղությամբ դոցենտ: 01.10.2009-20.05.2010 թթ. Գ.Ա.Նազարյանի վրա ժամանակավորապես դրվել են ՀՊՏՀ գիտության և որակի կառավարման վարչության պետի պարտականությունները: 20.05.2010- 11.01.2012 թթ. եղել է ՀՊՏՀ գիտության և որակի կառավարման վարչության պետ, 11.01.2012-03.09.2012 թթ.՝ ՀՊՏՀ գիտության բաժնի պետ, 03.09.2012-16.02.2017 թթ.՝ ՀՊՏՀ միջազգային տնտեսական հարաբերությունների ամբիոնի վարիչի պաշտոնակատար: 15.02.2017 թթ. մինչ օրս՝ տնտեսության կարգավորման և միջազգային տնտեսական հարաբերությունների ֆակուլտետի դեկան, միաժամանակ 02.09.2019 թվականից առ այսօր Գ.Ա.Նազարյանի վրա դրված են միջազգային տնտեսական հարաբերությունների ամբիոնի վարիչի գործառույթները:

Գ.Ա.Նազարյանի մասնագիտական հետաքրքրություններն են՝ «Միջազգային տնտեսական հարաբերություններ», «Արտաքին տնտեսական գործունեության տրանսպորտային ապահովում», «Առևտրի միջազգային համաձայնագրեր և կոնվենցիաներ», «Վճարային հաշվեկշռի կարգավորման հիմնախնդիրները», «Լոգիստիկան միջազգային առևտրում»:

Գ.Ա.Նազարյանի մասնակցությունը գիտական նախագծերին: ՀՊՏՀ «Ամբերդ» հետազոտական կենտրոնի «Մրցունակություն, միջազգայնացում և արտաքին առևտուր» հետազոտական ուղղության շրջանակներում 2013 թվականին իրականացրել է «Ծովային ելք չունեցող երկրների միջազգային մրցունակության հիմնախնդիրները (ՀՀ օրինակով)», 2014 թ.՝ «ՀՀ տնտեսության ոլորտային զարգացման և հարկաբյուջետային քաղաքականության հիմնախնդիրները Մաքսային միության անդամակցության պայմաններում», 2020 թ.՝ «Աղբահանության ոլորտում աղբի հավաքման, փոխադրման, պահման, հեռացման և (կամ) օգտահանման և վերամշակման գործընթացների ֆինանսատնտեսական վերլուծության և ծախսարդյունավետության գնահատում» թեմաներով հետազոտություններ: 2014-2015 թթ. գիտաուսումնական խմբերի հետազոտական նախագծերի շրջանակներում իրականացրել է «ՀՀ արտահանման ներուժի իրացման լոգիստիկ հիմնախնդիրները» թեմայով հետազոտություն:

Վերապատրաստում: 2005 թ. դեկտեմբերի 22-25-ը մասնակցել է ICAO-ի Փարիզի տարածաշրջանային կենտրոնում կազմակերպված կոնֆերանսին, 2008 թվականի դեկտեմբերի 6-7-ը՝ Հայաստան-Եվրամիություն գործընկերության քաղաքականության շրջանակներում AEPLAC-ի կազմակերպած դասընթացներին: 2008, 2009, 2010 և 2011 թթ. որպես վերապատրաստող մասնագետ մասնակցել է ՀՊՏՀ-ում անցկացված դասախոսների վերապատրաստման դասընթացներին՝ հանդես գալով «Կոնցեսիան որպես ներդրումների ներգրավման միջոց» թեմայով դասախոսությունների շարքով: 2013 թ. ապրիլի 18-20-ը Երևանում մասնակցել է «Որակի արտաքին և ներքին ապահովման համակարգերի մշակում և բարելավում» թեմայով վերապատրաստմանը (փուլ 1)՝ 22.04.2013 թ.՝ «Որակ և որակի ապահովում. ընդհանուր հասկացություններ», 23.04.2013 թ.՝ «ՄԿԾ-ի մշակում, ուսանողակենտրոն մոտեցում և որակի ապահովում», 24.04.2013 թ.՝ «Հետադարձ կապի մեխանիզմների մշակում»: 2013 թ. հուլիսի 9-10-ը Երևանում մասնակցել է «Որակի արտաքին և ներքին ապահովման համակարգերի մշակում և բարելավում» թեմայով վերապատրաստմանը (փուլ 2)՝ 11.07.2013 թ.՝ «Որակի մշակույթի ձևավորում և զարգացում», 12.07.2013 թ.՝ «ՈԱԱԿ-ի չափանիշներ և չափորոշիչներ. մեկնաբանում», 13.07.2013 թ.՝ «Որակի ապահովման կենտրոնի դերը և գործառույթները, ինքնավերլուծություն իրականացնողների հիմնական դերերի ներկայացում»: 2013 թ. սեպտեմբերի 9-12-ը Երևանում մասնակցել է

ARQATA ծրագրի շրջանակներում որակի ապահովման եվրոպական չափանիշներին համապատասխան կազմված փորձագետների խմբի աշխատանքին: 2020 թ. փետրվարի 5-6-ը մասնակցել է ՀՊՏՀ կողմից կազմակերպված «Վերջնարդյունքահեն կրթական ծրագրեր» թեմայով վերապատրաստմանը, 2021 թ. հունվարի 22-ից փետրվարի 15-ը՝ ՀՊՏՀ կողմից կազմակերպված «Նախագծերի կառավարման հիմունքներ» վերապատրաստման դասընթացին:

Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի տնտեսության կարգավորման և միջազգային տնտեսական հարաբերությունների ֆակուլտետի խորհրդի 2022 թվականի հունվարի 27-ի նիստում (արձանագրություն N 7) քննարկվել է տնտեսության կարգավորման և միջազգային տնտեսական հարաբերությունների ֆակուլտետի դեկանի թափուր պաշտոնի համար հայտարարված մրցույթին դիմած հավակնորդ Գ.Ա.Նազարյանի՝ «Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի դեկանի ընտրության ընթացակարգի» 13-րդ կետի համաձայն ներկայացրած ֆակուլտետի գործունեության առաջիկա հնգամյակի ծրագրի, հավակնորդի մասնագիտական բնութագրի և դեկանի պաշտոնին հավակնորդի համապատասխանության մասին հարցը: Խորհրդի 16 անդամից նիստին մասնակցել են 9-ը: Զեկուցողը և ելույթ ունեցողները նշել են, որ Գ.Ա.Նազարյանի ներկայացրած փաստաթղթերը լիովին համապատասխանում են դեկանի պաշտոնին ներկայացվող պահանջներին, շեշտադրելով, որ նա բարեխիղճ է, իր գործի հմուտ վարպետ է, պարտաճանաչ է, հստակ կատարում է իր աշխատանքային պարտականությունները, ընկերասեր է և մշտապես աջակցում է համալսարանի աշխատակիցներին: Այնուհետև դեկանի պաշտոնի հավակնորդի երաշխավորության մասին հարցը դրվել է ֆակուլտետի բաց քվեարկությանը: Քվեարկության արդյունքների հիման վրա (կողմ՝ 9, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0) տնտեսության կարգավորման և միջազգային տնտեսական հարաբերությունների ֆակուլտետի խորհուրդը երաշխավորել է Գ.Ա.Նազարյանի թեկնածությունը ներկայացնել գիտական խորհրդի փակ գաղտնի քվեարկությանը՝ տնտեսության կարգավորման և միջազգային տնտեսական հարաբերությունների ֆակուլտետի դեկանի թափուր պաշտոնի համար հայտարարված մրցույթին մասնակցելու համար:

Հարցը քննարկվել է նաև գիտական խորհրդին կից մրցութային հանձնաժողովի նիստում, որտեղ բաց քվեարկության արդյունքների հիման վրա (կողմ՝ 7, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0) որոշվել է Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի տնտեսության կարգավորման և միջազգային տնտեսական հարաբերությունների ֆակուլտետի դեկան, տնտեսագիտության թեկնածու, դոցենտ Գրիգոր Արշամի Նազարյանի թեկնածությունը ներկայացնել Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի գիտական խորհրդի

փակ գաղտնի քվեարկությանը՝ տնտեսության կարգավորման և միջազգային տնտեսական հարաբերությունների ֆակուլտետի դեկանի թափուր պաշտոնի համար հայտարարված մրցույթին մասնակցելու համար:

Ձեկուցողից հետո Գ.Ա.Նազարյանը ներկայացրեց տնտեսության կարգավորման և միջազգային տնտեսական հարաբերությունների ֆակուլտետի գործունեության առաջիկա հնգամյակի ծրագիրը:

Հաշվի առնելով վերոնշյալը՝ գիտական խորհուրդը որոշեց Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի տնտեսության կարգավորման և միջազգային տնտեսական հարաբերությունների ֆակուլտետի դեկան, տնտեսագիտության թեկնածու, դոցենտ Գրիգոր Արշամի Նազարյանի թեկնածությունը դնել գիտական խորհրդի փակ գաղտնի քվեարկությանը՝ տնտեսության կարգավորման և միջազգային տնտեսական հարաբերությունների ֆակուլտետի դեկանի թափուր պաշտոնի համար հայտարարված մրցույթին մասնակցելու համար (որոշումն ընդունվեց բաց քվեարկությամբ, միաձայն. կողմ՝ 55, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0):

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.-

Պրոֆեսոր Դ.Գալոյանը, դոցենտ Մ.Բադալյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ.-

Հիմք ընդունելով «Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպության գիտական խորհրդի 2017 թվականի մարտի 17-ի նիստում (արձանագրություն N 7) հաստատված «Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի դեկանի ընտրության ընթացակարգի» 34-րդ կետը, տնտեսության կարգավորման և միջազգային տնտեսական հարաբերությունների ֆակուլտետի դեկանի թափուր պաշտոնի ընտրության նպատակով գիտական խորհրդի նիստում ընտրված հաշվիչ հանձնաժողովի նիստի N 4 արձանագրությունը և փակ գաղտնի քվեարկության արդյունքները (**կողմ՝ 54, դեմ՝ 1, անվավեր քվեաթերթիկ՝ 0**)՝ **Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի տնտեսության կարգավորման և միջազգային տնտեսական հարաբերությունների ֆակուլտետի դեկանի թափուր պաշտոնում համարել ընտրված տնտեսագիտության թեկնածու, դոցենտ Գրիգոր Արշամի Նազարյանին**:

Գիտական խորհրդի նախագահ՝ **Դ. Գալոյան**

Գիտական խորհրդի քարտուղար՝ **Ն. Դարբինյան**

2022 թ. փետրվարի 8

Երևան

ՔԱՂՎԱԾՔ

«Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան»
պետական ոչ առևտրային կազմակերպության գիտական խորհրդի՝
2022 թվականի փետրվարի 8-ի, ժամը 14:00-ի նիստի
N 8 արձանագրությունից

ԼՍԵՑԻՆ.- **Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի ֆինանսական ֆակուլտետի դեկանի թափուր պաշտոնի համար հայտարարված մրցույթին մասնակցելու նպատակով** («Հայաստանի Հանրապետություն» օրաթերթ, 21.12.2021, N 221 (7662)) համալսարանի ֆինանսական ֆակուլտետի դեկան, տնտեսագիտության թեկնածու, դոցենտ **Վահե Կարմենի Միքայելյանի** ռեկտորին ուղղված դիմումի մասին հարցը:

Զեկուցող՝ գիտական խորհրդին կից մրցութային հանձնաժողովի նախագահ, հասարակագիտության ամբիոնի պրոֆեսոր, փիլիսոփայական գիտությունների դոկտոր, «ՀՊՏՀ ամբիոնի պատվավոր վարիչ» **Ա.Հ.Սարգսյան:**

Զեկուցողը նշեց. «Հայաստանի Հանրապետություն» օրաթերթի 2021 թվականի դեկտեմբերի 21-ի 221 (7662) համարում հայտարարվել է մրցույթ **Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի ֆինանսական ֆակուլտետի դեկանի** թափուր պաշտոնի համար, որին կարող են մասնակցել տնտեսագիտության դոկտորի կամ թեկնածուի գիտական աստիճան, պրոֆեսորի կամ դոցենտի գիտական կոչում ունեցող անձինք: Ֆինանսական ֆակուլտետի դեկանի թափուր պաշտոնի համար հայտարարված մրցույթին մասնակցելու նպատակով 2022 թվականի հունվարի 13-ին ռեկտորին դիմում է ներկայացրել ֆինանսական ֆակուլտետի դեկան, տնտեսագիտության թեկնածու, դոցենտ **Վահե Կարմենի Միքայելյանը:** Դեկանի թափուր պաշտոնի հավակնորդը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ, «Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպության կանոնադրությամբ և «Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի դեկանի ընտրության ընթացակարգով» սահմանված պահանջներին համապատասխան ներկայացրել է անհրաժեշտ փաստաթղթերը:

Վ.Կ.Միքայելյանը ծնվել է 1978 թվականի մայիսի 24-ին Արագածոտնի մարզի (նախկինում՝ Թալինի շրջան) Թալին քաղաքում: 1985-1995 թթ. սովորել և ոսկե մեդալով ավարտել է Թալինի թիվ 2 միջնակարգ դպրոցը: 1995-2000 թթ. սովորել և ավարտել է Երևանի պետական տնտեսագիտական ինստիտուտի (ԵՊՏԻ, ներկայում՝ Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան

(ՀՊՏՀ)) ֆինանսահաշվայի ֆակուլտետը՝ «Ֆինանսներ և վարկ» մասնագիտությամբ՝ ստանալով տնտեսագետ-ֆինանսիստի որակավորում: 2000-2003 թթ. սովորել է ՀՀ կառավարությանը կից Կառավարման և տնտեսական բարեփոխումների ինստիտուտի ասպիրանտուրայում:

Վ.Կ.Միքայելյանը 2003 թվականին պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն Ը.00.03՝ «Ֆինանսներ, դամաշրջանառություն և վարկ» մասնագիտությամբ և ստացել տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճան: 2009 թվականին նրան շնորհվել է դոցենտի գիտական կոչում: Հրատարակել է 1 ուսումնական ձեռնարկ՝ համահեղինակությամբ և 10 գիտական հոդված:

Վ.Կ.Միքայելյանի աշխատանքային գործունեությունը. 01.11.2000-01.10.2001 թթ. աշխատել է ՀՀ պետական գույքի կառավարման վարչությանն առընթեր Կառավարման և տնտեսական բարեփոխումների ինստիտուտում՝ կրտսեր մասնագետ, 16.11.2002-01.04.2003 թթ.՝ Թալինի քաղաքապետարանում՝ գլխավոր հաշվապահ, 13.11.2003-03.01.2006 թթ.՝ ՀՀ պետական գույքի կառավարման վարչությանն առընթեր Կառավարման և տնտեսական բարեփոխումների ինստիտուտում՝ առաջատար մասնագետ, միաժամանակ, 01.09.2004-01.07.2006 թթ.՝ համատեղությամբ՝ ՀՊՏՀ արժեթղթերի շուկայի ամբիոնում՝ դասախոս, 01.09.2006-01.09.2007 թթ.՝ ՀՊՏՀ արժեթղթերի շուկայի ամբիոնում՝ դասախոս, 01.09.2007-24.09.2008 թթ.՝ ասիստենտ, 24.09.2008-03.11.2014 թթ.՝ ՀՊՏՀ ֆինանսական ֆակուլտետի դեկանի տեղակալ-ասիստենտ, 01.09.2011 թ. մինչ օրս՝ համատեղությամբ ֆինանսների ամբիոնում՝ դոցենտ, 03.11.2014-15.02.2017 թթ.՝ ֆինանսական ֆակուլտետի դեկանի ժամանակավոր պաշտոնակատար, 15.02.2017 թ. մինչ օրս՝ ֆինանսական ֆակուլտետի դեկան: Ամուսնացած է:

Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի ֆինանսական ֆակուլտետի խորհրդի 2022 թվականի հունվարի 27-ի նիստում (արձանագրություն N 6) քննարկվել է ֆինանսական ֆակուլտետի դեկանի թափուր պաշտոնի համար հայտարարված մրցույթին դիմած հավակնորդ Վ.Կ.Միքայելյանի՝ «Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի դեկանի ընտրության ընթացակարգի» 13-րդ կետի համաձայն ներկայացրած ֆակուլտետի գործունեության առաջիկա հնգամյակի ծրագրի, հավակնորդի մասնագիտական բնութագրի և դեկանի պաշտոնին հավակնորդի համապատասխանության մասին հարցը: Զեկուցողը և ելույթ ունեցողները նշել են, որ Վ.Կ.Միքայելյանի ներկայացրած փաստաթղթերը լիովին համապատասխանում են դեկանի պաշտոնին ներկայացվող պահանջներին և շեշտադրել, որ զբաղեցնելով ֆակուլտետի դեկանի պաշտոնը՝ մշտապես վայելել է պրոֆեսորադասախոսական կազմի և ուսանողության հարգանքը, առանձնացել է մասնագիտական, կառավարչական, մարդկային և ուսանողամետ

բարձր որակներով՝ նպաստելով ֆակուլտետի աշխատանքի արդյունավետության բարձրացմանը: Վ.Կ.Միքայելյանը ներկայացրել է ֆինանսական ֆակուլտետի գործունեության առաջիկա հնգամյակի ծրագիրը, որի համատեքստում ընդհանուր գծերով անդրադարձել է ֆակուլտետի ուժեղ և թույլ կողմերին՝ առաջարկելով առկա խնդիրների և թերությունների շտկման որակապես նոր ուղիներ՝ մարտահրավեր նետելով ժամանակի պահանջներին: Մասնավորապես՝ գիտակրթական և ուսումնակազմակերպական գործընթացների որակի մակարդակի շարունակական բարձրացման ապահովման, ինչպես նաև համալսարանի ռազմավարությանը համահունչ առաջադրված զարգացման տեսլականի արդյունավետ իրականացման համար Վ.Կ.Միքայելյանը նախանշել է հետևյալ ուղղությունները՝ ուսումնամեթոդական և ուսումնակազմակերպական գործունեություն, գիտահետազոտական գործունեություն, միջազգային գործունեություն, նյութատեխնիկական հենքի ամրապնդում, ուսումնադաստիարկչական գործունեություն: Այնուհետև դեկանի պաշտոնի հավակնորդի երաշխավորության մասին հարցը դրվել է ֆակուլտետի բաց քվեարկությանը: Քվեարկության արդյունքների հիման վրա (կողմ՝ 9, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 1) ֆինանսական ֆակուլտետի խորհուրդը երաշխավորել է Վ.Կ.Միքայելյանի թեկնածությունը ներկայացնել գիտական խորհրդի փակ գաղտնի քվեարկությանը՝ ֆինանսական ֆակուլտետի դեկանի թափուր պաշտոնի համար հայտարարված մրցույթին մասնակցելու համար:

Հարցը քննարկվել է նաև գիտական խորհրդին կից մրցութային հանձնաժողովի նիստում, որտեղ բաց քվեարկության արդյունքների հիման վրա (կողմ՝ 7, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0) որոշվել է Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի ֆինանսական ֆակուլտետի դեկան, տնտեսագիտության թեկնածու, դոցենտ Վահե Կարմենի Միքայելյանի թեկնածությունը ներկայացնել Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի գիտական խորհրդի փակ գաղտնի քվեարկությանը՝ ֆինանսական ֆակուլտետի դեկանի թափուր պաշտոնի համար հայտարարված մրցույթին մասնակցելու համար:

Զեկուցողից հետո Վ.Կ.Միքայելյանը ներկայացրեց ֆինանսական ֆակուլտետի գործունեության առաջիկա հնգամյակի ծրագիրը:

Հաշվի առնելով վերոնշյալը՝ գիտական խորհուրդը որոշեց Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի ֆինանսական ֆակուլտետի դեկան, տնտեսագիտության թեկնածու, դոցենտ Վահե Կարմենի Միքայելյանի թեկնածությունը դնել գիտական խորհրդի փակ գաղտնի քվեարկությանը՝ ֆինանսական ֆակուլտետի դեկանի թափուր պաշտոնի համար հայտարարված մրցույթին մասնակցելու համար (որոշումն ընդունվեց բաց քվեարկությամբ, միաձայն. կողմ՝ 55, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0):

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.-

Պրոֆեսոր Դ.Գալոյանը, դոցենտ Մ.Բաղալյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ.-

Հիմք ընդունելով «Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպության գիտական խորհրդի 2017 թվականի մարտի 17-ի նիստում (արձանագրություն N 7) հաստատված «Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի դեկանի ընտրության ընթացակարգի» 34-րդ կետը, ֆինանսական ֆակուլտետի դեկանի թափուր պաշտոնի ընտրության նպատակով գիտական խորհրդի նիստում ընտրված հաշվիչ հանձնաժողովի նիստի N 5 արձանագրությունը և փակ գաղտնի քվեարկության արդյունքները (**կողմ՝ 54, դեմ՝ 1, անվավեր քվեաթերթիկ՝ 0**)՝ **Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի ֆինանսական ֆակուլտետի դեկանի թափուր պաշտոնում համարել ընտրված տնտեսագիտության թեկնածու, դոցենտ Վահե Կարմենի Միքայելյանին**:

Գիտական խորհրդի նախագահ՝ **Դ. Գալոյան**

Գիտական խորհրդի քարտուղար՝ **Ն. Դարբինյան**

2022 թ. փետրվարի 8
Երևան